

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ


Պոլիտիկոյ համար	
Տարեկան	10 Ժր.
Վեցամսեայ	5 »
Մասնատպակա համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Ամերիկայի համար	
Տարեկան	2.50 Ժր.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆԻՅԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ	

Մանուցանակ տողը 20 սան-  
րիս է. երեկեկ անկի ան-  
գամներու համար 20 Օլօ  
գեղը կըլայ:

ՊՅԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ՊԱՏՄԱՆԱՆՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՊՅԻՆ 10 ՍԱՆԹԻՄ



R. P. Kalémkarian  
(Autriche)  
Mehitharistangasse W.  
Vienne

Կանակի և գրքի գրքարան

Редакция на русском  
«Шаркун»  
Варна.

Redaction de  
«Charjoun»  
Varna (Bulgaria)

Գրքարանի և գրքի գրքարան

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵԲՇԱԲԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Վերջերս Պոլսէն հասած լու-  
րերէն կը տեղեկանանք որ Ազգ-  
վարչութեան երկամեայ շրջանը  
լրացած ըլլալով խմբովին հրա-  
ժարելու վրայ է. Այս հրաժար-  
ումը, եթէ մտաբեր իրականու-  
թիւն գտնէ, իր ետեւէն պիտի  
բերէ Ազգային ժողով գումարե-  
լու խնդիրը:

Սահմանադրութեան տրամա-  
դրութեանը համաձայն, Ազգային  
ժողով կը գումարուի ընդհա-  
նուր Հայրապետի, Պոլսի և Երու-  
սաղէմի Պատրիարքներու ընա-  
րութեան, Ազգային Վարչութեան  
երկամեայ պաշտօնավարութեան  
տեղեկագիրը լսելու և նոր ընա-  
րութիւն կատարելու համար:

Այսօր քանի որ կրօնական և  
Քաղաքական ժողովները իրենց  
չըլտնը լրացուցած են, անհրա-  
ժեշտ է որ գումարուի Ազգային  
ժողովը. նոր վարչութիւն մը  
ընտրէ և հինին համարատու-  
թիւնը առնէ. Եւ անհա ասոր դէմ  
են թէ՛ Սուլթանի կառավարու-  
թիւնը, թէ արգի Պատրիարքը  
և վարչապետները:

Սուլթանը, որուն բոլոր ջանքն  
է ոչնչացնել ամբողջովին Սահ-  
մանադրութիւնը, կորզել ազգին  
ձեռքէն իր ընտրական բոլոր ա-  
զատութիւնները, բնական է ա-  
մէն միջոց ձեռք պիտի առնէ  
որպէս զի օրինաւոր կերպով Ազ-  
գային ժողով չի գումարուի:

Պաշտօնական Եւրոպայի համար  
հայկական խնդիրը փակուած կը  
սեպուի, երբ մեծ ծառայով շար-  
գեր չի կան. և կամ ազգին գլու-  
խը Պատրիարք և վարչութիւն մը  
կը գտնուին: Ամէն ճնշումէ ազատ  
գումարուած Ազգային ժողով մը  
կրնայ այնպիսի վարչութիւն մը  
ընտրել, որ չուզէ Սուլթանին  
ձեռքը պարզ գործիք մը ըլլալ.  
Ի հարկին գիտնայ բողոքել, հրա-  
ժարիլ և հրաժարելու ստիպել  
նաեւ Պատրիարքը. բան մը որ  
այնքան արտոճելի չէ Սուլթա-  
նին:

Արգի Պատրիարքն ու վարչա-  
պետն ալ Սուլթանէն ոչ նուազ

փափագող են կանոնաւոր Ազգա-  
յին ժողով չի գումարուելուն: Օր-  
մանեան Ծնունդի ու Ձատկի շնոր-  
հաւորութիւններու ատեն երկայն  
ճառեր կը կարգայ, նոր աւետիս-  
ներ կուտայ, վրան գոց յաջո-  
ղութիւններու կակնարկէ. բայց  
երբ հարկ ըլլայ Ընդհանուր ժո-  
ղովի մը առջեւ իր պաշտօնավա-  
րութեան համարատուութիւնը  
տալու՝ երեւան պիտի գան իր  
պատրիարքութեան բոլոր ազգի  
կողմերը:

Օրմանեան ու Տատեան ազգին  
ի՞նչ բարիք տուին իրենց երկամ-  
եայ սողացող քաղաքականու-  
թեամբը: Կիրիկիոյ կաթողիկոսին  
արժողը դեռ թափուր կը մնայ.  
Հազարներով զայլթականներու հ-  
մաններուն վրայ կը սպասեն.  
Ներքը երկրին մէջ հալածանքը  
կը շարունակուի. բանտերը լե-  
ցուն են անմեղներով. և ասոնց  
ամենուն իբր լուսաւոյսակ սողն ու  
գաւանափոխութիւնը կը կենան:

Ահա միակ արգիւնքը իրենց  
խելացի և հաշտարար քաղաքա-  
կանութեան, և ատոնք բնաւ քա-  
լութիւն պիտի չունենան հաշիւ  
տալու:

Բայց Ազգային ժողովը պիտի  
գումարուի:

Սուլթանը հրաման չի պիտի  
տայ: Օրմանեան և Տատեան անձ-  
նուիրաբար (°) պիտի աշխատին.  
Թերեւս Օրմանեանի հրաժարա-  
կանն ալ վրայ գայ, մինչեւ որ  
Սուլթանը բարեհաճի ամենաու-  
ղորմածաբար արտօնութիւնը շը-  
նորհել: Մեքենայ, հինաւորաց  
երեսփոխաններ պիտի գումար-  
ուին անկիւն մը. լուիկ մնջիկ ի-  
րենց քուէն պիտի տան նոր վար-  
չութեան մը, առաջուց որոշուած  
անուններու, և առանց գիտողու-  
թիւն մը բնելու, առանց երես-  
նին նայելու պիտի ցրուին իրենց  
տեղերը:

Բայց թող տալու է որ այս կա-  
տակը գումարութիւնները կրկնուին.  
Թող տալու է որ վարձկաններու  
նոր խումբ մը ազգային դործերը  
վարէ անդունդէ անդունդ:

Օրմանեան և Տատեան ահաւոր

պատասխանատուութեան առջեւ  
կը գտնուին: Ազգային ժողովը  
պէտք է նախապէս վերակազմուի.  
և ամէն ճնշումէ ազատ, անկախ-  
րէն իր նխտերը ընէ: Հակառակ  
պարագային, թող չի կարծեն թէ  
ազգին մէջ ամէն բան մեռած է:  
ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՄԱՍՈՒԼԻ ՇՈՒՐՁԸ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՆԱՀԻՏԸ ԹԻԻ 5-6

Ղա՛, զա՛, զա՛... և երեւցաւ  
նուազար փաշայի «հռչակաւոր»  
ճրագիրը... Իւթօպի մը, անի-  
րագործելի երեւակայութիւն մը:  
Լիբանանի լեռան համար ձեւուած  
զգեստ մը, որ բազմալեզու, բազ-  
մացեղ և լայնարձակ Հայաստա-  
սին վրայ կուզէին նետել...  
1. տեղացիներէն պահակազօրք,  
2. դատարաններ և 3. հարկային  
սխտիմին վերափոխումը—անհա-  
ճրագիրը:

Այդ ամէնը լաւ է կրեպէի մը,  
Լիբանանի մը համար, ուր ճնշող  
մեծամասնութիւնը անդաշիններն  
են, իսկ Հայաստանը... Ո՛չ,  
ատանկ կէս-միջոցները վերջ չեն  
գարմաներ, այլ կաւելցեն:

«Պատրիարքի շուրջ կը շաու-  
նայ, համը կը կորսուի: Եմբողջ  
երկու միացեալ թիւերուն մէջ  
մեծագոյն մասը «օտար» է: Ար-  
տասահմանի հայ կեանքը նիւթ  
չի մատակարարեր:

«Մուրճը և ուսահայ արգի գրա-  
կանութիւնը» խորագիրով Պ. Չօ-  
պանեանի քննադատական յօդ-  
ւածը լի է ամենապրոտեստանտ  
գաղութիւնով և մեծամտական արխ-  
տով: Ռուսահայ գրականութեան  
լեզուն գէթօ է—հայերէն չէ...  
Միայն Վ. Փափաղեանն է որ աչ-  
ւոր լեզու մը ունի, ան ալ Տաճ-  
կահայ մըն է՝ ատոր համար: Իսկ  
Րաֆիկին, Աղայեանը, Պոռչ-  
եանը... է՛, Պ. Չօպանեան,  
դեռ կանխ ի Բոլիւլովին գորտին  
պէս եզրին հետ մըցելու ելլալ:

Երկու թիւերուն մէջ էն հետա-  
քրքրականը փոքրիկ նամակ  
մըն է, զոր Պոքրէշէն Տ. Պըլըզ-  
լեան մը կը գրէ Պ. Չօպանեանի:  
Այդ անձը կը հիւանայ, կը զմայլի

Չօպանեանի «Պատասխանատու-  
թիւններ» արտահայտի յօդու-  
ածին վրայ: Կը գրէ Պ. Չ. որ «իբր  
մտածածը արձակ համարձակ  
յայտնելու քաջութիւնն ունեցած  
է»... Բաշուլթիւն ունենալը հե-  
րիք չէ, Պ. Պըլըզլեան, բաւարար  
«միտք» ու «խելք» ալ ունենա-  
լու է:

Հայ կեանքը բազմալեզու է  
թերթէն. եզրագծակա՞ն ունեւ  
տպաւորութիւններ, յաջող ա-  
նյաջող թարգմանութիւններ...  
և դատարկ, դատարկ...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Օտտու, 16 Ապրիլ

ՈՒՍԱՅԱՒՄԵՐ ՄԵՐ ՄԵՍՆԱԿԵՐ ԳԼՈՒԿԵՐ

Հայ ժողովրդին յայտնի էր,  
որ մեր սեւագլուխ հագեւորա-  
նութիւնը անբարոյական և ան-  
պէտք է, բայց այդ վերաբերմ-  
էր նրա տգիտութեանը: Բացար-  
մենք ուզում ենք զոչոք սակ  
կըթցած համարժեք վարչապետ-  
ների և եպիսկոպոսների մեծ մա-  
սը ունելի անբարոյական և ան-  
զղբելի է քան ազեւ Կանադայի  
ները: Դեպի օգիտները մեծ  
կարող ենք մի քիչ ներառման  
լինել, նրանց պահապանութիւնները  
և յանցանքները արդարեւ  
զարգացած և կըթցած կրօն-  
կաններին ունելի խիտ պիտի  
լինենք, եթէ նրանք անբարոյա-  
կան են:

Այս յօդուածը գրելու շարժա-  
ռութիւնը մեր մէջ գտնվող զաք-  
ղացած, համալսարանի ուսանող,  
իր հովանաւորներին միջ ապա-  
զայ խոստացող վարչապետ է:  
Նախ քան այդ սեւագլուխ  
սին խօսելը, խօսենք այն միջա-  
վայրի մասին, ուր ոնդել, գա-  
տիարակվել է հայ եկեղեցու այդ  
ապագայ զարդը:

Այդ միջավայրը էլիսիած ինն է  
այնտեղ է ապրում հայրց օգե-  
նահռչակաւոր հողեւորական խո-  
թողիկոս Հայրիկը: Դժբարե-  
բար էլ միմանի սեւագլուխները  
երբէք այնքան անբարոյա-

չեն եղել, որչափ այսօր զառամած վասպուրականի արձևի օրով .

Գողանալ, իւրացնել աղգային փոփոքը այնպիսի եռանդով, որ դանկատվի իբր մի սուրբ պարտականութեան կատարում, դա մեր պահպանողական հոգևորականների անբռնարարելի պարտականութիւնն է : Մի Ներսէս, մի Սուքիաս, մի Սարգիս, մի Դաւթեան, մի Կէորդ եպիսկոպոս և այլ մանր մունր վարդապետներ, 20—70,000 ներ ունին . հարցրէք նրանց, ո՞րտեղից ձեզ այդ փողերը, Ս. հայրեր : Մէկը սինօզի գանձապահ լինելով, գրաւականներն է շահով գուրս առել ու վերջին երկու կաթողիկոսների զոյգի յափշտակութեանը մասնակից լինելով է հարստացել . երկրորդն ու հինգերորդը իբր թեմական առաջնորդ հարստահարել են թեմն ու դիպել հազարներ . երրորդը Կիլիկիայի կալուածքով է գանձել . չորրորդը ապարանի զբոսբերի վաճառումից, մանր կաշառներից է հարստացել . Սաթուհեան շամազապ վարդապետի և այլոց գողութիւններն ամենքին յայտնի են : Կահապետ վարդապետի մանր գողութիւնների անմահ վկաները Ղարսի յաջորդութեան գործերն են, սկսած անկողնի բրգի գողութիւնից մինչև պակեաների հրամաններին և այլ գողութիւնները : Հարցրէք Ղարսի հոգեւոր կառավարութեան նախկին անդամներին և քարտուղարին . նրանք ձեզ կը պատմեն քաղաքացիացի, զբոսբերի բաներ :

Ո՞ւմ յայտնի չէ գրանց զրպար-

տող, ուրիշի հաշիւն արդար, աղնիւ, մտքուր գուրս եկող բնաւորութիւնն ու ձգտումները : Ո՞վ չգիտէ այն խայտառակ դերքը, որ բանել էին և բռնում են դէպի աղգային հիմնարկութիւնները, ստորաքար ճիշտցներով ուրիշներին մատնիչ, տիրող կառավարութեան գործիք հաշակելով . և այն ոչ թէ մամուլի միջոցով, այլ թագուն, անանուն նամակներով, որ իրենք ազգի շահերի պաշտպան երեսն :

Մի թէ հարկաւոր է մէկ մէկ մատնանիչ անել այն անբարոյական արարքների ու քայլերի վրա, որ յետին սրիկային էլ պատուի չեն բերում : Սակայն մի Սուքիաս կարող է հանգիստ խղճով մեռնել, որովհետեւ մի Շողերի (իր եղբոր դուստրը) ստեղծելի հալածում նրան, մի Աշխէն չի փետում նրա մօրուրը : Մի կօմիտաս վարդապետի խայտառակ պղծութեան ժամանակ բռնելն ասեմ, թէ, փոքր Յուսիկի, Մուշկի, Կոստանդնի, Ղեւոնդի և այլ շատերի անբնական անբարոյականութիւնը . Կահան վարդապետ Տէր Գրիգորեանի պարսկական ախտը, որի ապացոյցը գտնվում է սինօզի մէջ, թէ կահապետ վարդապետինը : Ո՞ր մէկն ասեմ, ե՞րբ գրածս էլ անցաւ զբազան վայելչութեան սահմանից :

Թաւրիզ, 5 Ապրիլ  
Գործերի ստորաբաժնի

Այս պաղարիւն կենդանիները Գեր. Այլատեան եպիսկոպոսին մե-

ղադրում են իբր ոչ գործունեայ, աղգային արտօնութիւնները վրասանող, անբնական սեղական պաշտօնականների համադրութիւնը զբաւելու :

Մի խօսքով անխղճաբար զրպարտելով սրբոյանին, ուրանում են նրա ութ ամսայ մէջ սուած օգուտները և պարտաճանաչ հովիւ լինելը : Եւ այս բոլորի պատճառը միմիայն հացի խնդիրը, «չէր չէ չա փախ» և կուտակցակալ անհաւանկութիւնն է :

Առաջնորդը չը պաշտպանեց կեղտոտ Սաքսանեանցին . զպրոցից արտաքսված Ռաֆայէլ Մովսէսեանցին պաշտօն չը աւելց, Հոգաբարձութիւնն էլ տեսնելով Ղարսի ուսուցիչների ապիկարութիւնը և Կեղծաւորութիւնը, մտադիր է զպրոցը ազատել այդ խտաբամիտներից :

Միբղա Սաստուր. Փանուէլեանց և Ընկերներ, թէ և համոզված, որ Սուսանեանցի պահանջը սնիրաւ է, բայց և այնպէս պաշտպանում են սրան ի սէր նրա կնիւնը և Սրբազանը չէ համակրում այն պարտնների ուղղութեան, նրանց պաշտպան թիֆլիզի «Նոր-Գար» փողոցային թերթին, որովհետեւ համակրում է աւելի ազնիւ թերթիներին և գործիչներին :

Ի դէպ է յիշել, որ «Նոր-Գար» թիֆլիզում նոյն դերն է կատարում, ինչ որ «Բիւզանդիոն»ը Բոսնում . այսինքն սեփական շահերի համար ամեն ստոր քայլ անում է :

Հայ հասարակութիւնը էլ չի խաբվում այդ թերթիից և սրանց զօլվածին արհամարում, իսկ պարտաւածին յարգում է :

Իսկապէս ոչ մի անկեղծ, զարգացած և ազատամիտ մարդ չի կարող որեւէ կապ ունենալ այդ թերթերը հրատարակողների և նրանց համակրողների հետ, որովհետեւ զապիտարի, համոզմունքի և վաբք ու բարքի անբարեբութիւն, կենտրոնախոյզ ու ժի նման ներգործելով յախտեանկանապէս միմիայնցից հեռացնում է :

Մեր գործերը արձնում են առաջ-

նորդի կատարած գործերը . չեն ուզում տեսնել : Այն ինչ Սրբազանը միմիայն իր աղքեցութեան շնորհիւ կարգադրեց Սաւրա գիւղի խնդիրը : Գիւղի աէրը, Մաշաղ թաղին, թափրիզում շատ աղքեցիկ էր, կարող գործը ի վնաս չաչերի կարգադրել, եթէ Սրբազանի լուրջ զիմադրութեանը չը հանդիպէր : Մաշաղ-թաղու կաշտաբանները նախնական լինեցան : Սրբազանը փայնելով ներկայ Սասարազամի համալիրը, իրենք, գործը վերջացրեց հայերի օգտին : Նոյնպէս Սրբազանն էր, որ Սուսանեանի խնդրում զօրեղ կերպով գործելով արդարութիւնը պաշտպանելով, զպրոցի 5000 ֆրանք փրկեց, Հակոտակ պարագայում զպրոցը պէտք է փակվէր, իսկ խոյնիչներով հաւաքված զրամը պէտք է մտնէր Սուսանեանցի գրպանը :

Ս. առաջնորդն էր, որ Աստուծոյ կանխ խղճալի միճակը նկարագրեց կաթողիկոսին, «Մշակումը դրեց ֆարտասահմանի հայերի ուշադրութիւնը հրաւիրեց պարսկահայերի վրայ և այն ընդհանուր հրաւերի շնորհիւ 5000 թումանից աւելի գրում նուիրվեց օրերին, գաղթականներին, սովորականներին և կրթական գործին : Վերջապէս տարիներով թաղված կեղծունական զպրոցի խնդիրը Սրբազանի շնորհիւ վերակենդանացաւ և հաստատ հիմերի վրայ դրվեց :

Պարսկահայերը ստաշնորդի ջանքերի շնորհիւ պէտք է ունենան իրանց կեցր. զպրոցը, որ պիտի բացվի առաջիկայ սեպտեմբերին, նախնական ծախքերի համար թաւրիզում Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը 1000 թուման է նշխրել :

Դէ, անխիղճ հակաազգայնորդներ, սրանք գործիք չեն, ապացոյց չեն առաջնորդի գիտակցական գործունէութեան : Մարտունիներ, ցոյց աւելք ձեռ պաշտած նախորդ փոխ առաջնորդ Սասանեանի գործունէութիւնը, իմացաւորովայ ընթացքում . . . բացի ձեզ

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ՎՐԵԺ**

(Մի ՊԱՏԿԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԺ)

Ա.

Վազում էր Յոնոն աղան դէպի տուն . քրտինքը հոսում էր նրա ճակատից . շունը կորուսւմ, բայց նա վազում էր : Հեռուից երեւում էր նրանց գիւղը : Հրդեհ կար . բոցի հսկայական լեզուները խոշոր ալիքներով դէպի երկինք էին բարձրանում :

Վազում էր Յոնոն, արագ վազում ժամ առաջ նա ուզում էր օգնութեան հասնել, պատճել հրդեհաձեռքներին, կտոր-կտոր անել : Նա գիւղի ամենահարուստ, ուժեղ և ազգեցիկ մարդն էր : Նրա կարծ, խիստ լայնաթիկունք մարմնի ու հաստ բազուկների ուժը չա՞տ քրդեր էին փորձել . . . շատերը պատճել . . .

Այս վերջին երկու օրերը նա ջրաղացումն էր . ցորեն էր տարել աղալու : Տանը մնացել էին նրա 16 տարեկան որդին, թորոն և 12 տարեկան գեղափթիթ գեղեցկուհին : Երանքը նրա կիներ վաղուց մեռած էր :

Ջրաղացում նրան լոտը տւին, որ յայտնի աւազակ Սուլէյմանն իր

Հասո որդու և ընկերների հետ յարձակուէ է իր տան վրայ, կրակ տւել ու թալանում է :

Ջրաղացը կէս ժամւայ ճարտարէ էր գիւղից : Եւ Յոնոն օգնութեան էր վազում :

Բոցերը լափում էին Յոնոի գոմն ու մարագը :

Սուլէյմանի մարդիկը քշել էին արդէն գոմի բոլոր աւաւանները, ձիերի վրայ բռնաւորով հարուստ աւարի մի մասը : Ազատ էր միայն տունը, որ գիւղի ամենալաւ շինութիւնն էր : Աւազակները փակել էին թորոնի և Եուշանին առջ մեծ «օտայ»ի մէջ ու ու ձեռք կապած :

Ենչասպառ տունը հասաւ Յոնոն, մի խոշոր քար վերջրեց և արիւնկալած աչքերով մտաւ դռնից ներս : Նա ոչինչ չէր տեսնում . կատարութիւնը կուրացրել էր նրան :

— Մի՛ շարժել, որտաց մի ձայն նախասենեակի անկիւնից :

Յոնոն անմիջապէս չարացի իր ձեռքի ծանր քարը ձայնի ուղղութեանը : «Վա՛յ», մոնչեց քարը և վայր ընկաւ՝ աջ թեւը վիրաւորւած :

Այդ վարկեանին դուրս թռան հարեան սենեակներից Սուլէյմանն ու Հասոն, մարթինի փողերն ուղղեցին Յոնոի վրայ, հրամայելով չը շարժել : Յոնոն չնշմարեց հրացանների փողերը . մի հաստ փայտ քաշեց ու վրայ պրծաւ դէպի երկա-

սարդ աւազակը : Փայտը բարձրացաւ Հասոի գլխի վրայ . մի վարկեան և նրա գլուխը պիտի ջախջախէր . . . բայց Սուլէյմանի խէնջարի զօրեղ հարածը թուլացրեց Յոնոի աջ բազուկը . փայտը վայր ընկաւ : Հայր ու որդի կապեցին Յոնոի ոտն ու ձեռքը և զցեցին նախածնակիտի անկիւնը :

Խնուսի Ա. գիւղի փողոցներում ոչ ոք չկար . բոլորը երկիւղից տուն էին մտել, գոնեք փակել և ձեռքերից էին դուրս նայում :

Երբ մի քուրդ է վնասում, ամա բողջ աշիբէթն է ոտի կանգնում, իսկ հայը միշտ վնասի է մնում . . . .

Յոնոի գոմն ու մարագն այրոււմ էին, տունն արդէն կիսից աւելի թալանւել էր, իսկ հայրն ու պաւակները կապկապւած վայր էին ընկած . . . ոչ մի ձեռք օգնութեան չէր գայիս : Աւազակներն ազատ-համարձակ պտոււում էին տան մէջ, պէտքաւան իրերը շաւաքում և ձիերին բռնում :

Երեկոն մօտնում էր . պէտք էր հեռանալ : Սուլէյմանը մի վերջին ակնարկ գցեց մեծ «օտայ»ի վրայ : Ամէն ինչ տարւած էր . այլ ևս ոչինչ չէր մնում : Բայց նրա աչքն ընկաւ կապւած Եուշանի վրայ, որ կիսաուշազնաց՝ փոււած էր գետնին : Տոփանքի գազան մարմնացումը հետաքրքրեց, մտեցու ջանէլ կոյսին,

դիտեց նրա դէմքը . զազանական կիրքը յարժեց . . .

Վերջին խուճը ձիերը բարձաւ էին աւարով :

— Հասո, դու դնա՛ւ այդ փորի հետ, սասց Սուլէյմանն իր քրդուհի իսկ ևս Սասոի հետ ձեռ ետեւից կց գաւ, ճանապարհը կը պահեմ :

Որդին հպաաակեց . ձիերը ճամբայ ընկան : Հասոն և երկու ուրիշ ձիաւորներ քշեցին նրանց Ղօղբայ սարի կողմերը : Դապն մօտ մնացին միայն երկու նեփոյներ, մէկը Սուլէյմանի, իսկ միւսը վերաւրդ Ռաֆայ համար :

Սուլէյմանի կրքերը բորբոքել էին : Բայց քրտական ամօթխածութիւնը մի քիչ նեղում էր նրան :

— Մասո, վերջացրու այդ դեւաւուրի լակոսին, հրամայեց նա, ցոյց տալով կապւած թորոնի :

Մասոի թեւի ցաւը մամապնում էր սիրտը : Նա ուզում էր վրժօք լուծել ուզում էր Յոնոին սպանել, բայց չէր համարձակւում առանց պետի հրամանին խէնջարը շարժել :

Հայրը չեղաւ, որդին ընկաւ իր բաժնի . . . Ուրախացաւ Մասոն, Ձախ ձեռքով քաշեց իր սուր խէնջարը, մխեց պատանու կուրծքը, մի քիչ պտոյա աւեց ու դուրս քաշեց Հասոյեց կապւած պատանին, խոխուրաց և ապա ջղաձգական ցնցումներով հանգաւ, ինչպէս մի թոյլ ձրագ : Նրա ձայնը հասաւ հօրականիին . . .



բժշկական և առողջարանական տեսութեանց և տեղեկութեանց համար : Մեծայարգ Տօքթօրը Շահին անձնական բժիշկը ըլլալէ զատ, վերջերս կոչուած է պետական երկու պաշտօններու ալ :

— Տիխիսէ կը գրեն թէ Միրզօեաններու նաւթի տունը որոշեր է այս տարուան շահէն 12,334 բուպլի յատկացնել զանազան բարենպաստակ հաստատութեանց : Այս գումարէն 1000 բուպլի տրուած է Հայաստանի որբանոցներուն, 5000 բուպլի Տիխիսի մէջ երաժշտական ուսումնարանի շէնք մը կառուցանելու, 1000 բուպլի Տիխիսի մէջ առեւտրական ուսումնարան մը հիմնելու և մնացածն ալ զանազան նպատակներու համար :

— Յովհաննէս Այվազովսքի, նշանաւոր հայ նկարիչը, նոր նկար մը պատրաստած է որ կը ներկայէ Բուշքին մեծահամբաւ բանաստեղծը Գուրչուֆի ապառաժներուն վրայ : Ռուս շրջանակներու մէջ շատ հաւնուեր է այս նկար, և որոշուեր է զայն դնել Բուշքինի մահուան հարիւրամեակին հանդէսին սրահին մէջ :

— Ատափազարի մէջ 50ի չափ հայ երիտասարդներ, բարկանալով իրենց քահանային դէմ, կը մտածեն բողոքականութեան յարիւր և այս մասին մի նամակ ալ կը գրեն սեղուոյն բողոքական քարոզիչին, որ պատահանած է թէ անձ մը դաւանափոխ ըլլալու համար պէտք է աւելի հիմնաւոր պատճառներ ունենայ : Հետեւապէս կը յորդորէ այդ երիտասարդները որպէս զի մնան իրենց մայրենի եկեղեցիին մէջ, և շահան բառնալ այն զեղծումները, որոնք կը կարծեն թէ գոյութիւն ունին :

— Վան նահանգի Կավաչ գաւառի Սինէմերիք գիւղին մօտ գտեր են նաւթի հարուստ հանքեր : Հմուտ անձեր կրօնին թէ Վանի նահանգին մէջ նաւթի այնչափ առատ հանքեր կան, որ բազմապատիւ անոնց Պաքուի հորերը ոչինչ են :

— Շուտայէ մեզ կը հեռագրեն թէ 500 անձերէ բաղկացած միթինկ մը կազմուած հոն է, և որոշումներ քուէարկուած են, որք պիտի զրկուին Լահէ Զինաթափի վեհաժողովին : Նմանօրինակ միթինկներ կազմուած են Պուրկազ և Տօպրիչ : Պուրկաբոյ ուրիշ բազմաթիւ քաղաքներու մէջ պատրաստութիւններ կը տեսնուին : Միթինկներու գումարումը ծանուցանող հեռագրիները պիտի զրկուին մայիս 6ին, վեհաժողովին գումարման օրը, անոր նախագահին :

— Նոր-Ջուղայէն կը գրեն թէ Վարդանանց տօնին օրը հայերէն և անգլիերէն ներկայացումներ տրուեր են ինպատակ ազգային վարժարաններուն : Հասոյթը 700 զրան եղած է : Այդ քաղաքին

մէջ շահեր կը ըլլան օրիորդաց ուսումնարան մը կառուցանելու և Տիխիսէ նոր և կարող ուսուցիչներ և ուսուցչուհիներ բերելու :

— Սարմատի Հայերուն վիճակը այնչափ ծանրացած է հարստահարութեանց պատճառով, որ մտադրութիւն կայ խմբովին դաւանափոխ ըլլալու : Հաւթվան հայաբնակ գիւղը որ բաղկացած է 300 տունէ, օրթոնքս ըլլալ կը մտադրէ : Ուրմիայէն եպիսկոպոս մը պիտի դայ զանոնք մղրտելու :

— Արուեստագէտ Սըվաճեանի երկրորդ նուագահանգէսը Պաքուի մէջ շատ յաջողութիւն գտեր է : Մեծ բազմութիւն ներկայ եղած է : Տեղական ուսական թերթը մեծ զովեստով կը խօսի Սըվաճեանի արուեստին մասին :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

— Մարտիլայի խնամութեան ինն : Մենք գիտէինք թէ հրէշ վեղարաւորը տակուին հազար անգամ կրնայ մարդիկ Պրոպատիկէի աւաղանին մէջ :

— Յ. Պ. Չ. Սթամֆօրտ — Ձեր նամակը ստացանք, բայց 2.50 թղթադրամ տուարը մէջը չը կար : Ձեր թերթը սկսանք զբրկել, և փոխարժէքին կըսպասենք մընի օրաբոլ : ԹՎԹՄԻՐԱՄ ԵՐԻՆԷՔ ՄԻ ՂԻՆԷՔ : Խմբագրութիւնս պատասխանատու չէ կորստուած թղթադրամներուն համար : Ա. Ա. Թըրնօղօ-Սէյմէն : Ըստացանք վեցամեան : բաց-դիք մը գրուեցաւ նամակատան տնօրէնին :

Ն Ե Ր Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Կիրակի օր Վաւնայի մէջ ընկերվարականները միթինկ մը կազմակերպեցին : Մեր նախորդ պատասխանատուն Տօքթ. Սթօյանով և երկու ուրիշ ատենաբաններ խօսեցան և իրենց ընտրելիները ներկայացուցին : Տօքթ. Սթօյանօֆ . ի մէջ այլոց, յիշեցուց թէ Հայկական կոտորածներու ժամանակ, մինչդեռ դրամատէր Եւրոպան ծայրահեղ ետասիրութեամբ կաշխատէր ամէն բողոք խեղդել, աշխարհի ամէն կողմէ ընկերվարականները մարդկային խիղճը յուղեցին : Քարավէրֆի մասին բառական կծու ակնարկութիւններ եղան :

— Սօֆիայի մէջ ազատական մեծ միթինկ մը կազմակերպուեցաւ ուր խօսեցան Մ. Կրէքօֆ, Մ. Բատոլալօֆ . և ճշգրտապէս ներկայացուցին երկրին վիճակը Յետոյ ազատական ընտրելիները ներկայացուցան : Պուրկաբոյ ամէն կողմը մեծ եռանդ կայ վաղուան ընտրութեանց մասնակցելու : Կը յուսացուի թէ ազատական կուսակցութիւնը ստուար

մեծամասնութիւն շահի ընտրութեանց միջոցին :

— Ապրիլ 24ին երկրաշարժի ցնցումներ պատահած են Չէփէլար, Փաղարճըզի գաւառին մէջ :

— Վիէնայէ կը հեռագրեն թէ Մակեդոնական կեդրոնական կոմիտէն մտադիր է յիշատակագիր մը ներկայել Լահէի վեհաժողովին, յիշեցնելով Մակեդոնիոյ վիճակը : Պուրկաբոյ պաշտօնապէս պիտի մասնակցի այդ վեհաժողովին :

— Իշխանական հրովարտակ մը կը լուծէ 26 քաղաքապետական խորհուրդներ, որոց մէջ է նաև Սօֆիա քաղաքինը : Առժամանակեայ մասնախումբեր կազմուած են կառավարելու համար : Նոր ընտրութիւնները պիտի կատարուին յառաջիկայ Մայիս 9ին :

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ԹրքԱն Ան ԳՈՒՄԵՐ . — Հակառակ Սուլթանին իրատէին և Յունական Պատտարքարանի զօրաւոր ընդդիմութեան, Անտիօքի սինոդը ընտրած է Գեր. Մալաթէոսը իբր Պատրիարք : Այսպէս, Ռուսիոյ աղեկացութիւնը կը զօրանայ Պաղեստինի մէջ : Յունական Պատրիարքը պիտի բողոքէ, բայց ի զուր :

— Դուռը Իսթըրն Թէլէկրաֆ անգլիական ընկերութեան երկու ամիս պայմանաժամ տուած է Կ. Պօլսոյ և Քէօսթէնէճէի միջև ընդձովեայ հեռագրական պարանդեմեղելու համար : Երբ չը կրնայ, այս արտօնութիւնը պիտի տրուի գերման ընկերութեան մը :

— Ռուսիոյ բողոքներուն համեմատ, Դուռը խիստ հրամաններ զրկած է Վանի նահանգի իշխանութեանց Գուրեքը զսպելու համար : Բոլոր հին առանձնաշնորհումները պիտի ջնջուին : Վանի իշխանութիւնները ստիպողական հրամաններ ստացած են բոլոր հին և նոր սուրբերը հաւաքելու համար խտտութեամբ :

— Ռուսիոյ և Թուրքիոյ միջև գաշնագիր մը կնքուած է որով Բոնիայի, Սըվազի, Հալէպի, Ատանայի, Քասթամունիի և Պուսսայի նահանգներուն եկամուտները պիտի զանձուին Օսմանեան պանքային կողմէ և պիտի յանձնուին Ռուսական կառավարութեան վճարուելիք պատերազմական սուղանքին փոխարէն, որ կը հասնի տարեկան 350,000 ռուբլի : Օսմանեան պանքան պիտի վայելէ Հանրային Պարտքի վարչութեան առանձնաշնորհումները :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ . — Ռուսական արշաւախումբ մը որ բաղկացած է եօթը սպաներէ և ասանկչորս ճարտարագետներէ, հասած է Պարսկական սահմանադրութեան Պարսի մօտ : Ասոնք պիտի երկա-

րեն Տիխիս-Կարսի երկաթուղին մինչև Պարսից ծոցը :

— Քրօմուէլի երրորդ հարիւրամեակին առթիւ, Տօքթ. Փարքըրը ջերմապէս հարուածեց Ուէլլըի իշխանը, Լօրա Բօզպէրին, Ուիլհէլմ կայսրը և ամապլ Եպիսկոպոսական կուսակցութիւնը : Բոլոր Անգլիոյ մէջ ազատական մեծ զարթում մը կը նշմարուի :

ԿՈՒՋԷՔ ՀԱՐՍՏԱՆԱԼ

Դիմեցէ՛ք  
Մ. Թիւթիւնեան և Ընկ. Բուսնուք  
Ուր քստ աստղանոյ կը վաճառեն, Սօֆիայի քաղաքի Պուրկաբոյ կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի ամսականները :  
Օտար երկիրներէ յանձնարարութիւններ ևս կընդունուին :

Ա. Չ. Դ.

Յակոբ (Չատո) Նատրիան, 30 տարեկան, և Թարութիւն Միքայէան, 21 տարեկան, Ոգմբէրները 96ր ամբարն Մարսէյլէն վերադարձած են Ռուսաստան : Կը խնդրուի տեղեկութիւն ունեցողներէն հաղորդել հետեւեալ հասցէին  
Apraham Kalousdian  
233 Walnut st.  
Chelsea Mass.  
(U. S. America)

Ա. Չ. Դ.

Յառաջիկայ սեպտեմբերին պիտի բացուի Վառնայի մէջ Ա. Ամիրխանեանցի անօրինութեամբ օրթորոց Հայկական դպրոցը, որ Օր. Լ. Ամիրխանեանց զիւսուսը վարժուցիչ գերը պիտի կատարէ :  
Ուսանելու ուղորդական աստիճաններն զատ, ևս բացի Հայերէն ու Պուրկաբէն լեզուներէն, օրք պարտաւորիչ պիտի ըլլան, կան նաև Զրանսերէն, Գերմաներէն և Անգլիերէն լեզուները :  
Դիմելու ամսական 10, 6 և 3 լէվ : Դաշնակ—ամսական 15 լէվ 8 դրամ համար :  
3—6  
Տնօրէն  
Ար. Ամիրխանեանց

Ա. Չ. Դ.

Սիւրբէն Ը. Թարութիւն Թնկըրեան անմիջական պէտք ունի օգնական—օպերիչի մը : Եաջաթեան, ամսական կամ աստիճան սակարկութիւն : Վճարում քանակութիւն Դիմելու քաղաքի իրեն :

ԽՄԱԿՐՈՒԹԻՒՆ ԵՆՈՒՄ

Կը սպաղրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցեւորման, նամակազրուի, հարսանեկան հրաւիրազրու, մահադր, ինչպէս նաև պրօշուրները :  
Դիմելու յոյժ գիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԿ

Отговорникъ : А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.